

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻԻ ԽԱՏԱՐ	
Վժռանա	Ֆր. 1,50
Վժռանային դուրս	2
Արտատաշման	2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն գրութիւնք:	
Նամակ գրած և այլն գրիւ և հե-	
տեւեալ հասցէին,	
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ» Ի	
Վժռանա (Պուշկովսկա):	

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списването

„ГАДАГЪ“

ВАРНА (България).

Administration du journal

« GADAG »

VARNA, (Bulgarie).

Հասար 7 1/2 Սանթիմ

ԼԵՌԱՆ ՍԱՐԴԸ

Զուգութիւնն է մայր բարեաց :

Ասիէ 1500 տարի առաջ Հայոց միակ ղիւպազներգակ Եղիշէ պատմագիր վարդապետի խօսքն է այս . Ս. վարդանի ջատագով Աւարայրի պղպուլին գեղգեղանքն է . «Զուգութիւնն է մայր բարեաց եւ անգուգութիւնն՝ ծնող չարեաց» :

Հազար հինգ հարիւր տարի դըրբուելալ, հազար հինգ հարիւր տարի ձիւն ու կարկուտ վրայէն անցնելալ, տակաւին հինգսոթ ու մոշուած չէ երիցս երանհալ վարդապետի խօսքը՝ «Միութիւն ու միաբանութիւն բարիքներուն մայրն է, եւ չը միութիւնն ու չը միաբանութիւնն չարիքներուն ծնողն է» :

Միեւնոյն աղաղակն է, միեւնոյն արձագանքն է սր այսօր կը կրկնէ ու կը կրկնապատկէ Հայ Ժողովուրդը ընդդէմ մեր յեղափոխական կեդրոնական ու ջրկեդրոնական պետերուն :

Հազար հինգ հարիւր տարի առաջ, հազար հինգ հարիւր տարի ետքը, աւատիկ ահագին և ահագնած առաջ թուական մը մեր հայկական ըստած անգղաստութեան, անխմացութեան և չը հարկադրութեան առաջ :

Ո՛վ յեծապատիւ ու փոքրապատիւ Հայոց ազգ, ո՛վ պարօն ու չը պարօն զեկաւարիշներ, դուրը՝ Ժամանակը ու աղգային նուիրական շահը միութիւն ու միաբանութիւն կը պահանջեն, լեռն ու ձորը, քարն ու հողը միութիւն կ'աղաղակեն . այս ձայնին առջեւ խուլ եղողներն հայ չեն, դաւաճան ու մատնիչ աւանդներէն աւելի սեւ ու աղտոտ մակղերներու արժանի արարածներ են :

Գուցէ մեր աղգային գործիչ կամ աւելի բաց բառով կրճիչներն կը զայրանան մեր աստիճան մը կծու բանաղատութիւններէն . պակայն պէտք է քիչ մը ալ իրենք լայնամիտ ըլլան և հասկնան թէ ի՞նչ աստիճան դառն է նաև մեր ամենուս սիրական ազգին ու Ժողովուրդին ննթարկուած տառապանքներն, հայրենի տունին մէջ, մայրենի սրբատուն վայրերէն դուրս՝ օտար ու թափառիկ աստղերու տակ :

Սրգէն մենք մեր ծրագրի համառօտութիւնը հրատարակեցինք «Երևան»-ի մէջ «Ի՞նչ պիտի ընենք» վերնագրին տակ :

Այդ ծրագիրը՝ մեր երէկի կամ առջի առաջ համոզումը չէր, այլ երեսուն տարուսն և անձնական շատարժէք փորձառութեան արդիւնք :

Դերձակը կը կարէ, կօշկադործն ալ
կը կարէ, սակայն արուեստը տարբեր է
և իւրաքանչիւրը ունի իւր վարպետը ու
մասնագէտը. զանազանեւ հարկաւոր է
դարբինը ատաղձադործէն, որմնադիրը
մեքենադործէն:

Յեղափոխութիւնն ալ արուեստ մ'է,
հայկաքանութեան չի նմանիր, ուղղական
սեռական չունի և ոչ ալ սիրեմ, սիրեալ
կը խոնարհէ. Սուրի, սաթուրի դործ է,
մեռնիլ, մեռցնելու խնդիր է: Դօնտօն,
ժընէվ, Բարիզ արուեստագէտներու
քաղաք է, բայց ամեն Դօնտօնաբնակ,
Բարիզաբնակ ու ժընէվաբնակ արուես-
տագէտ չի կրնար ըլլալ. յեղափոխու-
թեան դասաւանդութեան ճիւղ չկայ
համալսարաններուն մէջ, և ոչ ալ Յօմա
ֆիլոսոֆիան տիրում կ'ունենան:

Յեղափոխականը՝ պէտք է դիտնայ,
ճանչնայ յեղափոխելի երկիրը՝ իր ձեռքի
մատներուն պէս, ժողովրդական բարք
ու վարք, տեղական հանգամանք, ներ-
քին և հակառակ ուժերու տարբերու-
թիւնն՝ մաթեմատիքական ամենաճիշդ
հաշուառութեամբ: Դօնտօնի Թայմըրը
Հայաստանի Եփրատին չի նմանիր, և ոչ
ալ ժընէվը Զէյթուն ըսել է: Այս ամե-
նուն հետ կը խոստովանինք որ իւրա-
քանչիւր անհատ ալ ունի իր դիրքը և
օգտակարութիւնը իր ունեցած բարե-
մասնութեան և առաւելութեան ճիւղին
մէջ, և որ՝ կրնայ յայտնուիլ Միութիւն
ըստած Սուրբ Սեղանին վրայ:

Եթէ պարկեշտ են մեր դործիչները,
եթէ անկեղծ են իրենց հայրենասիրա-
կան ձգտումներն, եթէ խարդախ խա-
բերաներ չեն կամ թշնամիին ձեռք ազ-
դասպան ու հայրենապաշտութեան վատագի ու
վատասիրտ դաւաճաններ, մէկ կողմ
թողլով իրենց եսն ու ամբարտաւանու-
թիւնը՝ խոնարհին հանքային շահուն առ-

ջեւ, ժողովրդական ձայնին առջեւ:

Մեր այս հրաւեր ու առաջարկ՝ ասկէ
եօթը տարի առաջ ըրածնուս կրկնու-
թիւնն է. եօթնամեայ անփոխարինելի
աղէաներէ ետքը ստելի բուռն և տեղի
ստիպողական:

Յ. ՉԱՔԸՆԱՆ

ԿԱՏԱԿ

ԱԶԳԻՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԵՏԵՐ

Մենք կը պահանջենք Յեղափոխական
կուսակցութեանց բացարձակ միացում,
ապա թէ ո'չ կործանում: Եթէ անոնց
նպատակը յօդուտ Ազգային Մ. Գառի
դործերն է, պէտք է անմիջապէս դահա-
ցում տան ժողովրդեան արդար ձայնին
ներկայ ամենաանհրաժեշտ պէտքերուն:
Մենք կը պահանջենք Հնչակի կեդրոնէն
և Գաշնակցականի պիւրօ անուանած
կեդրոնէն, որպէսզի համաձայնութեամբ
ընդհ. ժողովի մը տեղ որոշեն և իրենք
հաւասար թիւերով պատգամաւորներ
ընտրեն. բաց աստի՝ ունինք ազգին մէջ
չէզոք ազդասէր, քաղաքագէտ և ժողու-
վրդեան վիճակը մտէն սերտած անձ
նաւորութիւններ ալ որոնցմէ գէթ 12
հոգի հրաւիրուին, ընդունուին նաեւ
դրսէն մարդիկ և դրութիւններ, որոյ
ամենը նկատողութեան առնուելէ ետք,
ընտրուածները որոշեն ազգին ճակատա-
գիրը մեծամասնութեամբ: Յեղափոխու-
թիւնը պիտի դադարեցնէ՞ր թէ՛ շարու-
նակե՞նք, հերիք է այլ ևս ամեն մարդ
իր խելքին փշաճը կ'ընէ, ամօթ, հազար
ամօթ. մենք իրենց նման սպառնալիք
չենք խօսիլ այդ ինքնակոչ պարոններուն,
այլ կ'աղաչենք որ ականջ ունենան լսե-
լու ազգին պահանջներն, կը բաւէ ցարդ-
խուլ մնալին, ժամ է որ այլ ևս լսեն
ու գործադրեն:

Մենք վշակերով լեցուած, համբերութիւննիս հատած եղբայրասպանութեան պիտ'ելլանք, ուր որ ալ ըլլան. կ'սպասենք յեղեալ երկու կեդրոններուն յայտարարութեան և գործնական միջոցներուն

Եթէ խուլ մնան (1), իրենց խաղաղիք դարցուցած դաւաճաններէն չեն, հապառաւի լեռ գաւաճաններ, բաղդախնդիրներ են իրենք ցնորածներ Եթէ չընեն, պիտ'ընենք որ Սուլթանի կողմէ ընտրուած մեքենաներ են հայ ազգը բոլորովին կործանելու համար. եթէ ժողովրդին այս ըսածներուն տէրը չեն, այն առան

Այն առան, փոխանակ ցուցամուրութեամբ ազգին ճակատագիրը իրենց խաղաղիք ընելու և խաբէական միջոցներով դրամ չորթելու, յայտնի վտահայելի մարմին մը կազմուի որն որ կարող լինի առաջնորդել զինք զէպի լաւն ու նպատակայարմարը :

Պ. Յ. Յարութիւնեանց — Ղաւկաս Մ. Մեղիքեան — Գրեգոր Աբրահամեան — Ներսէս Յարութիւնեան — Սուքիաս Գ. Տումանեան — Տեղբուն Զորութեան — Աբրահամ Խաչիկեան — Մեղբուն Պետրոսեան — Ստեփան Յովհաննէսեան — Ղաւկաս Մարտիրոսեան — Ղազարոս Ասլանեան — Քեթիկ Յարութիւնեան — Խոսրով Մ. Հարաճեան — Նիկողոս Յակոբեան — Մեղբուն Թորոսեան — Յովհաննէս Գ. Խանսարեան — Մեղբուն Պ. Տորոսեան — Յարութիւն Գալիկեան — Ստեփան Մարաֆեան — Յակոբ Նիկողոսեան — Տեղբուն Մինասեան — Պետրոս Կարապետեան — Աւետիս Ժամկոչեան — Յակոբ Գ. Քիւրքեան — Նշան Մանուկեան — Համբարձում Յովնանեան — Էրանոս Ղազարոսեան — Սեֆէր Մանուկեան — Արմենակ Պետրոսեան — Գրեգոր Կ. Թորոսեան — Ասատուր Յարութիւնեան — Նշան Տանէկեան — Խաչատուր Մ. Յ. Մեղիքեան — Սարգիս Մ. Յ. Մեղիքեան — Նշան Ա. Ժամկոչեան — Յովհաննէս Պայուելի — Արմենակ Կ. Գըլըճեան — Յակոբ Աւետիսեան — Պ. Յ. Արմենակ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՍՆԱԼՈՐ ՀԵՌԱԳԻՐԲ «ԿԱՏԱԿ» Ի

Կ. Պոլիս, 21 Յունիս
Հրեայք վերջերս օսմանեան պիտութեան մատուցած մեծամեծ ծառայութեան

(1) Խօսքերնիս Հնչակի կեդրոնին և Դաշնակցականներու գլխաւոր ներկայացուցիչներուն համար է :

Թեանց փոխարէն դիշեր ցերեկ Պաղեստինը կը պահանջեն, հաճախակի պարագային կ'սպառնան պատերազմի դաշտին վրայ գտնուող հրեայ կամաւորները ետ կանչել, որոց շնորհիւ է որ, կ'ըսեն, թուրք բանակին այնքան յաղթութիւններ տարաւ :

Պերլին, 21 Յունիս.

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ ասպահովութիւնը կատարեալ է, միայն Բրուսիայի Զէքի Բաշան սպաննուած գլխունեցաւ, միւս Գերմանացի բաշաները ողջ են :

Կ. Պոլիս, 21 Յունիս.

Վիլիթթորիա Թագուհւոյն Յորեւանին առթիւ հոս կատարուած խրախճանութեանց համար երբորդի կառավարութիւնը կը դանդաղի կ'ըսէ զէմ ըսելով թէ՛ ի՞նչ համարձակութեամբ դեռ պանն առանց հրամանի, առանց իրաւեթի ինք իր գլխուն մեր մայրաքաղաքին մէջ փամփուշտներ, թնդանթներ և առմբեր արձակել կուտայ որոց անպիտան պայթիւններն երբեք չպիտ'ընային գլխուն գատ, մայրաքաղաքիս սօրալակի գունդերն իսկ երեւան հանելու պատճառ եղաւ և քիչ մնաց որ քանի մը հազար Հայեր ալ շարդուէին այն առան վեհ. Թագուհին ի՞նչ պիտ'ի ընէր, նա՛ւ պիտ'ի զրկէր նորէն, բայց մինչեւ ո՛ր Զարմանալի է որ, կը յաւելու, երբեք զանգատագիրը, մինչդեռ մեր վեհափառ կայսրը, Հայ մեծ եաղնիքուն սուգը կը բռնէ և այս պատճառաւ իր գահակալութեան օրը գեւրանէ ճիշեակի մը անգամ նետել տալու սիրա չունի՝ անդին Վիլիթթորիա Թագուհին ա՛հ, ի՞նչ հակապատկեր երկու վեհապետաց մէջ :

«ԿՆՏԱԿ» Ի ՊՏԱՌՏԸ

Մեր Կոստանի ծրարներէն մին պառայտի եղներով իւրստուգ ալ հանդպած և ան-
խոհեմաբար Ա. Ե. անուն նշանաւոր վա-
ճառականի մը տունը գացած է, ինչպէս
երեւոյթը ցոյց կուտայ Նոյն Մեծա-
պատու իւններն սովորութիւն չունենա-
լով սաքով գացող հիւրերն ընդունելու,
երկու ժրտմի բաժնեգին ահագին ծան-
րութեան մ'ալ տակը չը ճղմուելու հա-
մար բարեհաճած են մեզ վերադարձնե-
լու, որոյ համար կը պարտաւորինք մա-
տուցանել հրապարակաւ հարկը քիօ
չնորհակալութիւն :

ԹՕՐԱԼ ՇԷՅԹԱՆԸՆ

ՉԱՔԻՄ ՕԼՄԱԸԸ

— 0 —

(Ե' տիմի Նիւսիւնին պաղըսը վէ խիթամ)

— Էֆէնտիմ օնլարրնոտ գապահաթը եօզ,
չիւնքի օլ զէմանըն հալինէ կէօրէ պէօլէ
տիւչիւնտիւլէր, գապահաթ չիմալքիլէրին
տիրքի, պու զէմանըն հալինէ կէօրէ պիր
թէպէտտիւլաթ տիւչիւնմէզլէր :

— Պէ' ճանըմ, սէնալ իչի ուզուն խոէ-
յօրսըն :

— Նէ' հարայրմ :

— Նրիցկինսիլ կիւրլէր նէ' հարըյօրլարսա
սէնալ օնու հարտա, օրթալըզը վէլվէլէյէ
վէրմէ :

— Է'յ հաթիմ, իշթէ մէսէլէ վէ պէնիմ
ֆապիլէթլի բարազ օլտուզումըն զըյմէթի
օնտա, պէն օնլարը երգլէրմէ կէօրմիւլ վէ
պիրիշլիմ, ֆազաթ քիլիւնէֆին հուգուգունու
բարազըզը վազիֆէմ իրէ մուաֆազա իթմէյէ
մէճալուր օլտուզուման, օ' հօլա առլա կիթ-
մէյի գապուլ իթմէմ, չիւնքի բարազըզտա
էօլէ հաշամալ, քիլիւնէնին գանունլարընը
այալ ալթընա ալըզ, բիւլէթմէք տիր :

— Պէ' ճանըմ, հէր չէյի վազիլինէ կէօրէ
դոլլանմալ լազըմ :

— Աճայր' պ կէօլլէրի կէօրմէզ ոֆուլարա,
հախօա ոֆուլըզ թաղայանլարա հարանմալ

իչին քիլիւնէյի այալ ալթընա ալամամ :

— Աչիքեար պիր երէցկին ալմագտան իսէ,
կիզլի խթէալիկին գարըյը ալմագ քիլիւնէյի
այալ ալթընա ալմագ տէմէք տիր :

— Էլէթ, պէն քիլիւն գանունը միւճի-
պինմէ աչիքեար կվէնմէմ, օ' Ալլահըն էմրի
տիր, ֆազաթ կիլլի էվէնմէմ քիլիւնէյի ա-
յալ ալթընա ալմագ տիր « չընտէթիւն » տըր,
քի քիլիւնէնին գանուններ պօզար վէ ուլա-
տումըզա գարըն էն պէօլլաք կիւնահը իշլէ-
միշ օլտուրուլ : Պիրինճիսի եէնի գանունտա
գապուլ օլունան տառնարանեալ պատուի-
րանքն պիրի տիրք քի, քիլիւն գանունընա
տախիլ օլուպ տէր « սուրք է ամուսնութիւն եւ
սուրք են անկողինք նոյս » : Շիմալ պիլ պու-
վալ իթմիշ օլտուզումուլ սրտութիւնը պօ-
զարալ ուլտաւոր բարազ մը օլտուրուլ,
հօգտա փիլոն ալթընա դոյլուդը պէլլիսիլ
չէյիմանլար մը, սէօզլամ պէն կիլլի քիլիւն
գանունընը մուհաֆազա խոէն բարազլար
իչին աէյիլ :

— Ազնատըմ, հազըն վար, պէն պէօլ-
լէճէ իլամ խաէր վէ սանա վէրիլիմ, ալ օնու
տօղրու կաթոլլիկու հազըթ իլէրինէ կէօթիւր :

— Հազ գայըզ օլմալ, ինչպիսի մուրա-
տընա էրիպ տէ, երինէ քիլիւնէն ճան ու
կէօնիւլտէն էյի խըզմէթ խոէրսին . անճադ
զեւտապիլէրէ ուլուպտա Իսրայէլին կոյալա-
րընա կէօլ տիքմէյուլ տէ, նէ' վէրիլլէրսէ
գանաթ է' թ . գուրթուլ :

Մուհաքէմէ խիթամ պուլտու :

Ա. Զ. Գ.

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տե-
ղերն :

Սատունի սրճարանին ծխալմաճաւը Պ.
Թէրզեանի մօտ . Մուսալլա, Ապաուրրանման
մզկիթին գիմալը Պր. Ա. Զարպանէլիանի
և Մուսալլա, Վապուրալիան սրճարան Պ.
Գեղամ Տ. Յարութիւնեանի մօտ :

Отговорникъ : П. Глушковъ.

Печатница К. Никодовъ. — Варна.